Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ

Ն. Խ. Սարիբեկյան

« 20 » 09 2023թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱ-ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I.Ընդհանուր դրույթներ

1. Գիտա-բժշկական ուսումնական կենտրոնը /այսուհետ՝ ԳԲՈՒԿ կամ՝ Կենտրոն/ Ավանդական բժշկության համալսարանի կարևոր ստորաբաժանումներից մեկն է, որն իրականացնում է ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքներ ,ուսանողների և դասախոսների շրջանում:
   Այն ծառայում է ինչպես բնակչության, այնպես էլ ԱԲՀ-ի աշխատակազմի, ուսանողների բուժսպասարկմանը:

II. Գիտա-բժշկական ուսումնական կենտրոնի կառուցվածքը և գործառույթները

2. ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակները չորսն են՝ բժշկական ընդհանուր պրակտիկա, ռեֆլեքսոթերապևտիկ, ստոմատոլոգիական, ատամնա-տեխնիկական:
3. Կենտրոնը ղեկավարում է գլխավոր բժիշկը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համալսարանի ռեկտորը:
4. Կենտրոնի անձնակազմի հաստիքային պաշտոնները համալրվում են գլխավոր բժշկի՝ համապատասխան թեկնածուի առաջարկմամբ և ռեկտորի հրամանա-գրմամբ:
5. Կենտրոնի գլխավոր բժիշկը պատասխանատվություն է կրում.
   - Կենտրոնի գործունեության համար, ինչպես ուսումնական, այնպես էլ բուժսպասարկման բնագավառում:
   - Կենտրոնի գլխավոր բժիշկը հաշվետու է համալսարանի ռեկտորին՝ Կենտրոնի գործունեության համար:

- Կենտրոնի գլխավոր բժիշկը պատասխանատու է Կենտրոնի նյութա-տեխնիկական բազայի լիարժեք և անխափան աշխատանքի, ինչպես նաև գույքային միջոցների պահպանման համար:
- Կենտրոնի գլխավոր բժիշկը հետևում է շենքային պայմանների սանիտարական նորմերի պահպանմանը:

6. Կենտրոնի յուրաքանչյուր մասնագետ պետք է ունենա լիցենզավորման մարմինների կողմից պահանջվող անհրաժեշտ որակավորման փաստաթղթեր:
7. Կենտրոնի գործունեության մեջ ծագած հիմնահարցերը քննարկվում են և լուծվում համալսարանի ռեկտորատում:
8. Կենտրոնի գլխավոր բժիշկը անհրաժեշտության դեպքում Գիտական խորհրդի նիստում աշխատակիցներին ներկայացնում է խրախուսման՝ համաձայն համալսարանում գործող կարգի:
9. Կենտրոնի աշխատակիցների՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում Կենտրոնի գլխավոր բժիշկը զեկուցում է Համալսարանի էթիկայի հանձնաժողովի նախագահին:
10. Կենտրոնի կողմից բնակչության բուժսպասարկումն իրականացվում է վճարովի հիմունքներով, իսկ ԱԲՀ-ի աշխատակազմի և ուսանողների բուժսպասարկում՝ անվճար:

III. Եզրափակիչ դրույթներ

11. Կենտրոնի կանոնակարգում փոփոխություններ կատարելու առաջարկություն ներկայացնում է գլխավոր բժիշկը, որը հաստատվում է ԳԽ-ի կողմից:
12. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԱԲՀ գիտական խորհրդի կողմից: